ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ «ԿՏՐԻՃՎՈՐԱՑ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արևմտյան Ուկրաինայի մի շարք քաղաքներում գոյություն ունեցած հայկական «Կտրիճվորաց եղբայրությունների» պատմությունը առ այսօր կարոտ է բազմակողմանի և խոր ուսումնասիրության։ Այս հոդվածով մենք նպատակ ունենք համառոտ կերպով կանգ առնել հիշյալ «եղբայրությունների» գործունեությանը վերաբերող մեզ ծանոթ հայերեն մի շարք սկզբնաղբյուրների վրա և փորձ անել հակիրճ մի պատկերացում տալու այդ կազմակերպությունների մասին։

Դեռևս անցյալ դարի վերջերին առանձին հայ ուսումնասիրողների գործերում տեղ էին գտել «եղբայրությունների» մի քանի կանոնագրություններ։ Սակայն դրանք ոչ թե հետազոտություններ էին, այլ սոսկ հրապարակումներ, որոնք ի դեպ, այժմ չափազանց մեծ արժեք են ստանում բնագրերի անհետացած լինելու պատճառով։ Ըստ էության այդ հարցի գիտական հետազոտման սկիզբը դրվել է միայն վերջերս։ 1951 թ. հրապարակվեց պատմաբան Լ. Խաչիկյանի «1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը» հոդվածը։ Հենվելով XIII դարի նշանավոր գիտնական և բանաստեղծ Հովհաննես Երզնկացու կողմից Երզնկա քաղաքի «եղբարց միաբանութեան» համար գրված «Սահման և կանոնք»-ի վրա, որը պահպանվել է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № № 2329, 652 ձեռագրերում, Լ. Խաչիկյանը ցույց է տալիս, որ 1280 թ. պատմական Հայաստանի Երզնկա քաղաքում ստեղծված այդ «Միաբանությունը» եղել է քաղաքային աշխատավորական երիտասարդական շերտերն ընդգրկող կազմակերպություն, որը կապված չի եղել առևտրի կամ արհեստի որևէ ճյուղի հետ և անդամների փոխադարձ օգնության ու օժանդակության հիման վրա նպատակ է ունեցել պայքար ծավալել քաղաքի ֆեոդալական վերնախավի դեմ։ Երզնկայի «եղբայրության» «Սահման և կանոնք»-ի նյութերը հիմք են տվել հեղինակին նմանության եզրեր գտնելու այդ կազմակերպության և մոնղոլական տիրակալության լծի խստացման ժամանակաշրջանում (XIII դ.) Փոքր Ասիայի քաղաքներում առաջ եկած «ախի» («եղբայր») կազմակերպությունների միջև։ «Ախիները» քարոզում էին եղբայրություն և հյուրասիրություն, կանգնած էին աղատության պաշտպանության դիրքերում, օգնություն էին ցույց տալիս չունևորներին և պայքարում քաղաքների ֆեոդալական տերերի դեմ։ «Ախիների» մեջ ընդգրկված էին նաև Փոքր Ասիայի քաղաքների աշխատավորներ և, մասնավորապես, Երզնկայի շատ քաղաքացիներ։

---

1 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Երևան, 1951, № 12, էջ 78։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրության շնորհիվ պարզվել է, որ Երզնկայի եղբայրության նման քաղաքային կազմակերպություններ եղել են հավանորեն նաև Հայաստանի Անի և Վան քաղաքներում։ Հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ հիշատակվում են 80 վանեցի հայ կտրիճներ, որոնց ղեկավարում էր «մանկտավագը»[2]։ «Մանկտավագ» տերմինը, որը բաղկացած է «մանկտի» (պատանի, երիտասարդ, զինվոր) և «ավագ» բառերից, նշանակում է մանուկների, պատանիների կազմակերպության ղեկավար անձ։ Այդ տերմինը հայտնի էր միայն Մատթեոս Ուռհայեցու վկայակոչված աշխատության մեջ։ Լ. Խաչիկյանը XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից բերում է «մանկտավագի» օգտագործման երեք օրինակներ ևս և գալիս այն հետևության, որ ««Մանկտավագության» ինստիտուտը, գոյությունն ունենալով դեռևս XII դարի սկզբին (1120 թ. մերձավորապես), իր գոյությունը շարունակել է նաև հետագայում»[3]։ Այն արտագաղթի հետևանքով տարվել է հեռավոր երկրներ և ի վերջո հասել նաև Ուկրաինա։ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունների մեջ (XVI դ.), որոնք պահվում են Ուկրաինական ՍՍՌ Կենտրոնական պետական արխիվի N 39 ֆոնդում, բազմաթիվ անգամներ հոլովվում է «մանկտավագ» տերմինը։ Դա լրացուցիչ մի կարևոր փաստ է Կամենիցում «մանկտավագության» ինստիտուտի գոյությունը հաստատելու համար։ Մինաս Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքի մեջ բերված Կամենիցի հայկական Աստվածածին

---

2 Նույն տեղում, էջ 78—79։

3 Նույն տեղում, էջ 79—80։

4 Հարկ է նշել, որ լեհահայոց գաղթավայրերում գոյություն ունեցած «Կտրիճվորաց եղբայրությունների» հարցը համառոտ կերպով շոշափված է Ա. Բ. Կարինյանի, Ա. Դ. Հովհաննիսյանի և Վ. Կ. Ոսկանյանի ուսումնասիրություններում։ Ա. Բ. Կարինյանը նշում է, թե «եղբայրության» անդամները երիտասարդներ էին և «ինչ որ կապերով այդ կտրիճները» կապված էին ցեխերի հետ»։ Նա ենթադրում է, որ «կտրիճների» եղբայրությունը Արևմտյան Եվրոպայի «վարպետացումների» միության նման կազմակերպություն է եղել» (տե՛ս նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» I հատորը. Երևան, 1956, էջ 72)։ Ա. Դ. Հովհաննիսյանը, կանգ առնելով Երզնկայի եղբայրության և փոքրասիական «Ախի» եղբայրությունների կապի վրա և նշելով, որ փոքրասիական «Ախի» կազմակերպությունները սկիզբ են առել միջինասիական եղբայրություններից, հանգում է այն հետևության, թե «լեհահայ «կտրիճների» այդ կազմակերպությունները հաջորդաբար գալիս էին նախորդ դարերի ընթացքում հայկական ընտանիքում կազմավորված երիտասարդական «եղբայրություններից» ու «ախիներից» (տե՛ս նրա «Երվագներ հայ ազատագրական մտքի պատմության» առաջին գիրքը, Երևան, 1957, էջ 423)։ Սակայն դեռևս փաստարկման կարիք է զգում հեղինակի այն միտքը, թե Լեհաստանի գաղթավայրերի այդ «եղբայրությունները» իրենց առաջադրած պահանջներով երբեմն հանդես էին գալիս նույնիսկ քաղաքային վարչությունների մեջ բազմած մեծատունների դեմ (նույն տեղում)։ Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքում գետեղված հիշատակարաններից մեկը, որտեղ տեղեկություն կա «կտրիճվորաց եղբայրության» մասին, գրավել է Վ. Կ. Ոսկանյանի ուշադրությունը. նա գրում է, թե «XVI դարի սկզբում գոյություն ունեին ինչ որ, հավանորեն կարևոր, կազմակերպություններ, որ Բժշկյանի հավաքած հիշատակարաններից մեկում անվանվում է «Կտրիճվորաց միաբանություն» (1522 թ.)։ Նա նշում է նաև Վարդան արքեպիսկոպոսի կողմից «Կտրիճվորաց միաբանություն» հաստատելու իրողության և այն մասին, որ XVII—XIX դարերի ընթացքում այդպիսի եղբայրություններ գոյություն են ունեցել նաև հայկական այլ գաղութներում (Մոլդավիա, Բուկովինա, Տրանսիլվանիա) (տե՛ս В. К. Восканян, Древняя Русь и Украина в судьбах армян, «Исторические связи и дружба украинского и армянского народов», Сборник материалов научной сессии, Ереван, 1961, էջ 71)։

եկեղեցու հիշատակարանից արդեն հայտնի է, որ 1522 թ. «...զմիարան կտրիճներն նկարել ետուն զկէս եկեղեցին (Աստուածածնի—Վ. Գ.) հանդերձ բոլորովին պատկերքներով»։ Իսկ սբ. Նիկողայոս եկեղեցու հիշատակարանը «Պատմէ, թէ յամի ՌԾԶ (1607) ապրիլի ԻԵ (25) միարան մանկունք ետուն շինել մեծ և քաղցրահնչիւն զանգակ մի։ Ապա յիշէ 25 անուանս հանդերձ փառաւոր յիշատակօք»։ Ուրեմն Կամենիցում կային հայ կտրիճներ և նրանց ղեկավարը, ինչպես դարեր առաջ Հայաստանում, այնպես էլ նոր հայրենիքում շարունակում էր կոչվել նույն անունով՝ «մանկտավագ»։

Կամենիցյան արձանագրություններից երևում է, որ 1567—1575 թթ. կամենիցահայ կտրիճների մանկտավագը եղել է Սարգիսը, որը, մեծ հեղինակություն վայելելով համայնքում, այդ տարիներին ընդգրկված է եղել դատարանի կազմի մեջ։ Դժբախտաբար մանրամասնություններ Կամենիցի այդ կազմակերպության վերաբերյալ մեզ հայտնի չեն, հավանաբար այդպիսիք կլինեն արձանագրությունների լեհերեն և ղփչաղերեն կազմված բաժիններում, որոնք դեռևս ուսումնասիրված չեն։ Սակայն մոտավորապես կարելի է որոշել, թե ինչ ճանապարհով է հասել այդ տերմինը, և առհասարակ կազմակերպությունը, Կամենից։

Ուռհայեցուց հետո «մանկտավագ» տերմինը օգտագործվել է 1334 թ. Կաֆայում (Թեոդոսիա) ընդօրինակված ճառընտիրի հիշատակարանում, որտեղ, ի թիվս այլ անձանց, կոչ է արվում հիշել նաև «մանկտաւագ Կազուրին»[6]։ Այստեղից հետևություն, Կաֆայում, Ղրիմի ամենահայաշատ այդ կենտրոնում, XIV դարում դեռևս գոյություն է ունեցել մանկտավագությունը, իսկ անվիճելի իրողություն է, որ 1475 թ. թուրքերի կողմից Կաֆան գրավելուց հետո տեղի շատ հայեր մասսայարար գաղթել են Կամենից, թարմացնելով տեղի արդեն ասլազգայնացող գաղութի կազմը[7]։ Ընդհանրապես պետք է ասել, որ թե՛ Գալիցիայի, և թե՛ Պոդոլյեի հայկական գաղութներում անընդհատ ընթացել է ապազգայնացման պրոցեսը և եթե այնտեղի հայերը կարողացել են այնուամենայնիվ դիմանալ դարերի փորձությանը, պահպանել իրենց ազգային սովորություններն ու որոշ տեղերում անգամ լեզուն, ապա դա եղել է Հայաստանից, Փոքր Ասիայից, Մոլդավիայից ու Ղրիմից անընդհատ շարժվող գաղթականների նորանոր խմբերի ազդեցության ներքո։ Այսպես էլ, ըստ երևույթին, պատահել է Կամենիցում։

Անհրաժեշտ է նշել, որ Ղրիմի և, մասնավորապես, Կաֆայի հայերը մեծ դեր են խաղացել Կամենիցի հայկական գաղութի կյանքում։ Հայտնի է, որ Կամենիցի հայկական սբ. Նիկողայոս եկեղեցու հիմնադիրը (1398) կաֆայեցի հայ էր՝ Խութլուբեյի որդի Սինանը։ Մի այլ կաֆայեցի՝ Տիրատուրի որդի Անտրիասը XVI դ. երկրորդ կեսին հավարավոր ֆլորիններ է ծախսել Կամենիցի եկեղեցիների նորոգման վրա[8]։ Հետաքրքրական է, որ Կամենիցում եղած լավագույն հայերեն ձեռագրերից մեկը՝ Ճաշոց գիրքը, գրվել ու ծաղկվել է Սուրխաթում (Ղրիմ) 1349 թ., իսկ կամենիցյան հռչակավոր աստվածամոր

---

5 Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 149, 147։

6 Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 79։

7 А. Е. Кримський, Тюрки, їх мови та література, Київ, 1930, էջ 137։

8 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 144—145։

նկարը, լեհ պատմաբան Ա. Ռոլլեի կարծիքով, բերվել է Սևաստոպոլից 1380 թ.[9]։ Բնորոշ է, որ Կաֆայի հայկական վանքերի ու եկեղեցիների ճարտարապետությունը ներշնչման մշտական աղբյուր է հանդիսացել Կամենիցի ու Լվովի հայ շինարարների համար։ Հիշենք նաև ուսումնասիրողներից շատերի կարծիքն այն մասին, որ Կամենիցի հայերի զինչաղախոս դառնալու մեջ մասն ունեն նաև Ղրիմից այնտեղ եկած զինչաղախոս հայերը։ Այսպիսով հնարավոր է, որ «մանկտավագության» ինստիտուտն էլ, հայրենի այլ արաղիցիաների հետ միասին, Հայաստանի ու Փոքր Ասիայի հայկական կենտրոնների հետ ավելի լայն կապեր ունեցող Կաֆայից անցած լինի Կամենից։ Հետագա պրպտումներն ավելի պարզություն կմտցնեն այս հարցի մեջ։

Ուսումնասիրության կարոտ է նաև մի այլ խնդիր։ Կամենիցում, ինչպես նշում է պրոֆ. Ե. Մեդինսկին, ուկրաինական առաջին «Եկեղեցական եղբայրությունը» ստեղծվել է 1589 թ.[10], մենք հակված ենք մտածելու, որ նրա առաջացման պատճառների մեջ եռին պլանի վրա չի եղել նաև նմանօրինակ եղբայրության առկայությունը հայկական թաղամասում, որը սահմանակից էր ուկրաինացիների թաղամասին։ Կամենիցի հայերը մշտապես բարեկամական հարաբերությունների մեջ էին իրենց ուկրաինացի հարևանների հետ և չէր կարող պատահել, որ վերջիններս լավատեղյակ չլինեին ինչպես հայկական թաղամասում կատարված իրադարձություններին, այնպես էլ այնտեղ գոյություն ունեցած հաստատություններին։ Քանի որ խոսքը գնում է փոխազդեցությունների մասին, ասենք նաև, որ բացառված չէ այն ազդեցությունը, որ ունեցել են իրենց հերթին ուկրաինական եղբայրությունները հայկական եղբայրությունների վրա։ Օրինակ, Յազլովեցի հայկական «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրության մեջ ոչ միայն առատ են ուկրաինական տերմինները, այլև առկա են անդամ ուկրաիներեն դարձվածքներ։

Կամենիցից բացի «Կտրիճվորաց եղբայրություններ» են եղել նաև ուկրաինական մի քանի այլ քաղաքների հայկական գաղութներում։ Լվովում հայերեն գրված եկեղեցական մի ժամանակագրությունից տեղեկանում ենք, որ 1690 թ. նոյեմբերի 10-ին Լեհաստանի հայերի Վարդան արքեպիսկոպոսը հատուկ կոնդակով հաստատել է Ստանիսլավի «Կտրիճվորաց եղբայրություն»-ը, որը հիմնադրել էր Նիկոլ Թորոսովիչ տխրահռչակ արքեպիսկոպոսը[11]։ Լվովում XVII դարի 60—80-ական թվականներին գոյություն են ունեցել հայկական եկեղեցական երկու եղբայրություններ՝ «Սբ. Աստվածածնի» և «Սբ. Գրիգորի», առաջինի մեջ ընդգրկված են եղել պատանիներ, իսկ երկրորդի մեջ՝ մեծահասակներ։ Եղբայրություններն ունեցել են հատուկ դրամարկղներ, որտեղ հավաքված դրամական միջոցներն օգտագործվել են քահանաներ պահելու համար։ Այդ եղբայրությունները փաստորեն ենթարկվել են Լվովի հայկական ավագանու խորհրդին[12]։ Լվովցի Օգսենտ վարդապետի չափածո մի քերթվածից տե-

---

[9] Տե՛ս նրա „Zameczki podolskie na kresach multanskich", tom II, Kamieniniec nad Smotryczem, Warszawa, 1880, էջ 129։

[10] Проф. Е. И. Медынский, Братские школы Украины и Белоруссии в XVI—XVII вв. и их роль в воссоединении Украины с Россией, М., 1954, էջ 22։

[11] Ա ր ի շ ա ն, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 129։

[12] Я. Р. Дашкевич, Армянское самоуправление во Львове в 60—80-ых гг. XVII в. (протоколы армянского совета старейшин как исторический источник), անտիպ, էջ 32—33։

դեկանում ենք, որ նա Կուտի նորաշեն քաղաքում 12 տարի քահանայություն է արել, հիմնադրել է եկեղեցի և երեք եղբայրություն[13]։ Ինչպես տեսնում ենք, մեր տեղեկությունները վերոհիշյալ «եղբայրությունների» մասին, որ քաղված են գլխավորապես հայկական սկզբնաղբյուրներից, դեռևս շատ աղքատիկ են և հնարավորություն չեն ընձեռում լրջորեն ծանոթանալու նրանց կառուցվածքին և գործունեության բնույթին, տեսնելու, թե ի՞նչ զարգացում և փոփոխություններ են ապրել նրանք ժամանակի և պայմանների ազդեցության ներքո։ Լվովցի պատմաբան Վ. Գրաբովեցկու հաշվումներով Արևմտյան Ուկրաինայում XVII դ. կեսերին հայկական եղբայրությունների թիվը անցել է 40-ից[14], հետևապես պետք է որ ուկրաինական արխիվներում նրանցից մնացած լինեն ուշագրավ վավերագրեր. անհրաժեշտ է շարունակել որոնումներն այդ ուղղությամբ։

Բարեբախտաբար, հայկական սկզբնաղբյուրները մյուս քաղաքների «եղբայրությունների» վերաբերյալ ավելի պերճախոս են ու ընդարձակ։ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում ի թիվս Գալիցիայից տարված հայերեն, լեհերեն և գիչաղերեն արժեքավոր շատ ձեռագրերի, պահվում է նաև Յաղլովեց քաղաքի հայկական գաղութի 1646 թ. հիմնադրված «Կտրիճվորաց միության» 31 հոդվածներից (արտիկուլներից) բաղկացած կանոնադրությունը, որը հաստատվել է 1658 թ. Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսի կողմից։ Այդ կանոնադրության նկարագրությունը տրված է Վիեննայի մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակի մեջ[15]։

Մի այլ, բայց ավելի համառոտ կանոնադրություն, ավելի ճիշտ «եղբայրության» կառուցվածքի ընդհանուր նկարագրություն, 1751 թ. գեներալ Հովսեփ Լյուբոմիրսկու կողմից Ռաշկով քաղաքի հայերին տրված արտոնագրի հետ միասին, պահպանված է Բժշկյանի ճանապարհորդական նոթերի մեջ[16]։ Ռաշկովի «եղբայրության» կանոնադրությունը մեծ նմանություն ունի ռումինական Բոտոշանի, Յաշ և Ռոման քաղաքների պատանեկաց ժողովների կանոնադրության հետ, որը տպագրված է «Արարատ» ամսագրի 1889 թ. հունիսի համարում։ Այդ կանոնադրությունը հաստատել է Էջմիածնի Եղիազար կաթողիկոսը 1690 թ.։ 1790 թ. այն լուրջ խմբագրության է ենթարկվում, կազմվում է բոլորովին նոր տեքստ և հաստատվում Հովսեփ Արղության արքեպիսկոպոսի կողմից։ Կանոնադրությունը գործնականում կիրառվել է մինչև անցյալ դարի առաջին քառորդը[17]։

Լվովի Ուկրաինական ՍՍՌ Պետական պատմական արխիվի № 475 ֆոնդի № 78 գործի մեջ գտնվող հայերեն վավերագրերից մեկը Տիսմենիցա քաղաքի հայկական գաղութի «Անարատ հղիության Սբ. Աստվածածնի կտրիճվորաց եղբայրության» մատյաններից է, որտեղ գրանցվել են պատարագներ անելու

13 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 163։

14 В. В. Грабовецкий, Армянские поселения на западноукраинских землях, «Исторические связи и дружба украинского и армянского народов», Сборник материалов научной сессии, Ереван, 1961, էջ 93։

15 Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 923—924։ Այդ կանոնադրության լուսանկարային պատճենը մեզ է տրամադրել բանասեր Ա. Մնացականյանը։

16 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 182—183։

17 «Արարատ», 1889, հունիս, էջ 398—407։

համար տրված նվիրարերությունները։ Գրանցումները, որ արված են 1732-ից մինչև 1776 թթ., հայերեն են՝ Տիմենիցայի հայության առօրյա-խոսակցական լեզվով, ուստի նրանք համարյա չուսումնասիրված հայկական այդ գաղութի պատմության համար ուշագրավ սկզբնաղբյուրներ լինելուց բացի, կարևոր վավերագրեր են նաև հայկական բարբառների ուսումնասիրության համար։ Արձանագրություններից մեկից (գրանցված 1735 թ. նոյեմբերի 16-ին), երևում է, որ «Եղբայրության» հիմնադիրը եղել է Գալիցիայի հայության պատմության մեջ նշանավոր դեր խաղացած մի անձնավորություն, հայտնի բառարանագետ, փիլիսոփա և ժամանակագիր Ստեփանոս Ռոշքան, Ստանիսլավի օֆիցիալը[18]։ Տրանսիլվանիայի հայության պատմությանը նվիրված իր ուշագրավ գրքում Գ. Գովրիկյանը տպագրել է Գելա հայաքաղաքի հայկական «Սր. Երրորդության կտրիճվորաց», «Գրիգոր Լուսավորչի» եղբայրությունների և «Սր. Աննայի» աղջիկների եղբայրության կանոնադրությունները, որոնց հեղինակը Ռոշքան է։ Այդ կանոնադրություններում հատուկ նշված է այն մասին, որ վաղուց գոյություն ունեցած այդ եղբայրությունների կանոնները 1729 թ. գրի է առել Լեհաստանի հայկական եղբայրությունների կանոնադրությունների օրինակով Գելայի այցարար Ստեփանոս Ռոշքան[19]։ Հետևապես Արևմտյան Ուկրաինայի, մասնավորապես Տիմենիցայի, հայկական հոգևոր եղբայրության վերաբերյալ տեղեկություններ կարելի է քաղել նաև այդ կանոնադրություններից։

Վերոհիշյալ կանոնադրությունները նմանություններ ունեն ինչպես միմյանց, այնպես էլ Երզնկայի «Եղբայրության» «Սահման և կանոնք»-ի հետ։ Այդ «Եղբայրությունները» հոգևոր կազմակերպություններ են և կապված չեն արհեստի ու առևտրի որևէ մասնաճյուղի հետ։ Նրանց հիմնական նպատակն է եղել երիտասարդներին տալ հոգևոր դաստիարակություն, փոխադարձ օգնության և օժանդակության հիման վրա համախմբել նրանց սեփական եկեղեցու շուրջը։ Չի կարելի այդ «եղբայրությունները» նույնացնել համքարական կազմակերպությունների հետ։ Նշված քաղաքների հայկական գաղութներում այդ «եղբայրություններին» զուգահեռ գոյություն են ունեցել նաև համքարական կազմակերպություններ, որոնք նույնպես կոչվել են «եղբայրություններ», մի բան, որ եղել է նաև հետագայում։ Օրինակ, Ռաշկով քաղաքում թե՛ համքարական կազմակերպությունները, և թե՛ «Կտրիճվորաց միաբանությունը» կոչվել են նույն անունով՝ «Պրաստավա» («братство»,—«եղբայրություն» բառից)։ Ընդհանուր շատ բան ունեն սրանք իրենց վարչական կառուցվածքով, բայց միանգամայն տարբեր խնդիրներ հետապնդող կազմակերպություններ են։ «Պրաստավան քիւրքջոց և թէրզընուն», «Պրաստավան սուրուկճոց, կօշքարաց, մազմանողաց և խասապջոց և այլոց» ընդգրկել են իրենց մեջ նույն արհեստով

[18] Центральный государственный исторический архив Украинской ССР во Львове, ф. 475, ед. хр. 78.

[19] Գ ր ի գ ո ր Գ ո վ ր ի կ յ ա ն, Դրանսիլուանիոյ հայոց մեարապոլիսը կամ նկարագիր Կելա հայաքաղաքի ի գիր և ի պատկերս, Վիեննա, 1896, էջ 76։ Այդ նույն ժամանակ (1729) Ստեփանոս Ռոշքան նմանօրինակ եղբայրություններ, ինչպես և արհեստավորական կազմակերպություններ է հիմնել ու նրանց համար համապատասխան կանոնադրություններ մշակել Տրանսիլվանիայի Եդիսաբեթուպոլիս հայաբնակ քաղաքում։ Գ. Գովրիկյանը թվարկում է այդ եղբայրությունները՝ «Ս. Երրորդութեան, Ս. Աննայի, Ս. Յովսէփայ, Ս. Ստեփաննոսի երիտասարդ մաշկագործաց եղբայրութիւններ և այլն» (տե՛ս նրա «Հայք Յեդիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյս», Վիեննա, 1893, էջ 55)։

դրաղվող անձանց, ունեցել են իրենց «Բրավային քօրայ արդիքուլներն, ըէյեսդրներն, աքթաներն, կէյիւրի և խարճի տաֆթարներն, նաղտ ստակն և զժողովածուն հուրումներուն կամ ըէհիններն, երբ կուտան շահու ստակն»[20]։ Այդ ամենով կարգավորել են նրանք իրենց ներքին հարցերը՝ աշակերտների, վարպետացուների և վարպետների հարաբերությունները, հումքի ձեռք բերման, արտադրության ու սպառման հետ կապված դանազան խնդիրներ և այլն։ «Պրասդավան ամենեցունց կտրիճաղպերուն, ընդ պահպանութեան Աստուածամօրն միշտ կուսի Մարիամայ» դուտ երիտասարդական կազմակերպություն է՝ կազմված «ազգ», այսինքն ազգ, չամուսնացած կտրիճներից։ Նրանք ունեն իրենց առանձին կանոնադրությունը՝ «Եւ պի կառավարվին զիւրեանց պրասդավայ արդիքունուն գօրայ Առաջնորդին և այլ»[21]։ Դ. Գովրիկյանը հրատարակել է թե՛ համքարական և թե՛ «կտրիճվորաց» եղբայրությունների կանոնադրություններ, որոնց բաղդատումից ակնբախ են դառնում այդ կազմակերպությունների միջև եղած էական տարբերությունները։ Այսպես, օրինակ, Գեղայի մաշկագործաց (սուրակճոց կամ խաղախորդաց) եղբայրության կանոնադրությունից և արտոնագրերից կարելի է իմանալ, թե ինչպիսի՞ կառուցվածք ուներ այն, ինչպե՞ս էին ընտրում «Հայաքաղաքի և Կէօրկէն Սէնդ Իմրէի գղտորայծենի և սեկ շինող հայ արուեստաւորներն ամէն տարի... իրենց գլխաւոր և փոխանորդ վարպետ մը», ի՞նչ իրավունքներ ունեին այդ ընկերությունը ու նրա անդամները, ովքե՞ր կարող էին ընտրվել որպես աշակերտ։ Հատուկ նշված է, որ «Ընկերութեան մէջ առնուածն՝ եթէ ամուսնացեալ չէ, նայի, որ տարին չանցած ամուսնանայ»։ Մի խոսքով, այնտեղ կա այն ամենը, ինչ սովորաբար լինում է համքարությունների կանոնադրությունների մեջ[22]։ Գեղայում եղել է նաև վաճառականաց եղբայրություն և հոգևոր եղբայրություններ, որոնցից մեկն էլ «Կտրիճվորաց» կազմակերպությունն է։ Վերջինիս նպատակն է եղել երիտասարդության հոգևոր դաստիարակությունը, միմյանց փոխադարձաբար օժանդակությունն ցույց տալը։ Կտրիճը ամուսնանալուց հետո մեկ տարի «այս եղբայրութենէս չիպի գատվի։ ...Տարին որ լըմնայ, շնորհակալ պի գայ Եղբայրութեանը, Սէսիայի ատենը»[23]։ Ինչպես տեսնում ենք, թե՛ Ռաշկովում, և թե՛ Գեղայում «Կտրիճվորաց եղբայրության» անդամ կարող էին լինել երիտասարդ-չամուսնացած անձինք (ամուսնանալիս «եղբայրները» կազմակերպության մեջ կարող էին մնալ մեկ տարի), իսկ համքարությունների մեջ միայն ամուսնացածները (ամուրիներին ամուսնանալու համար տրվում էր մեկ տարի ժամանակ)։

«Կտրիճվորաց եղբայրությունների» մեջ ընդգրկված են եղել տարբեր մասնագիտություններ ունեցող կամ էլ դեռևս սովորելու ընթացքում, գուցե և արդեն որևէ համքարության մեջ գտնվող երիտասարդներ, որոնք հետագայում, տարիքն առնելուց հետո, անցել են համքարական կազմակերպությունների մեջ։ Իսկ հոգևոր մյուս եղբայրությունների անդամները, ըստ երևույթին, կարող էին միշտապես և՛ համքարության մեջ գտնվել, և՛ լինել հոգևոր եղբայրության անդամ։ Բայց առայժմ դժվար է այդ ամենի մասին որոշակի խոսել։

20 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 182։
21 Նույն տեղում։
22 Դ. Գովրիկյան, Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը..., էջ 34—35։
23 Նույն տեղում, էջ 83։

քանի որ այդ կազմակերպությունների փոխհարաբերությունների հարցը դեռևս կարոտ է ուսումնասիրության։

Ընդհանրապես նկատվում է, որ Ուկրաինայի և Տրանսիլվանիայի հայաշատ քաղաքներում գոյություն ունեցած հոգևոր եղբայրություններից, սովորաբար, ամեն քաղաքում մեկն էր միայն լինում պատանեկաց՝ կտրիճվորաց եղբայրություն, մնացածներն ընդգրկում էին մեծահասակներին։ Տարբերություններ, անշուշտ, գոյություն ունեն կտրիճների և մեծահասակների եղբայրությունների կառուցվածքի և առաջադրած խնդիրների միջև, բայց հիմնական նպատակն ամենուրեք նույնն է՝ փոխադարձ օգնության և օժանդակության հիման վրա համախմբվել հայկական որևէ եկեղեցու շուրջը։

Երզնկայի 1280 թ. կանոնադրությունը տալիս է «Եղբայրության» անդամի բարոյական կոդեքսը՝ լինել անկեղծ հավատացյալ, այսինքն ամեն օր մի քանի անգամ աղոթել, նշել բոլոր կրոնական տոները, շաբաթ և կիրակի օրերը անպայման եկեղեցի գնալ, ներկա լինել պատարագին, խոստովանել հանցանքները, հաղորդվել և այլն[24]։ Այս նույնը, տարբեր ձևերով, կրկնվում է վերը նշված բոլոր կանոնադրությունների մեջ։ Աշխարհը ծով է և մարդիկ ալեկոծվում են նրա մեջ, ամեն փորձանք հնարավոր է, ասվում է Երզնկայի կանոններից մեկում, և եթե «եղբայրներից» որևէ մեկը ընկնի դժբախտության մեջ, մյուսների պարտքն է օգնության շտապել նրան՝ թե՛ նյութապես և թե՛ բարոյապես։ Նույն այս միտքը տարբեր բառերով կրկնվում է և մյուս կանոնադրությունների մեջ։ «Եւ թէ որ ի տկարութիւն և ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկանիցի,—կարդում ենք Երզնկայի կանոններում,—յամենայն աւր եղբայրութենէն ի տեսութիւն գնասցեն և զհիւանդացեալն մխիթարեսցեն, և դեղով և բժշկով ձեռնտու լիցին»[25]։ Բեռլայի սուրբ Երրորդության կտրիճվորաց եղբայրության կանոնադրության մեջ այս միտքը ձևակերպված է հետևյալ կերպ. «Երբոր մէկնըվոր եղբայրը հիւանդանայ ու աղքատութեան համար անճարակ մնայ, տես պի երթան հիւանդին ու պի հոգան, որ իրենց եղբայրութեան սընդկէն այն հիւանդին ողորմութիւն տան ու դեղրանքն ալ պի հոգան նարա առողջութեանը սէպն»[26]։ Բառացիորեն նույնը կրկնվում է նաև Լուսավորչի եղբայրության և Սբ. Աննայի աղջիկների եղբայրության կանոնադրությունների մեջ[27]։

Մեծ նմանություններ են նկատվում «եղբայրների» թաղման մասին եղած կանոնների մեջ։ Երզնկայի «Եղբայրության» «Սահման և կանոնքի» համաձայն, կազմակերպության անդամները պարտադիր կարգով մասնակցելու են հուղարկավորությանը և վերջում «...ամեն եղբայր մին աւր պատարագ տայ առնել յանուն վաղճանելոյն»[28]։ Բոտոշանիի, Յաշի և Ռոմանի «Եղբայրության» կանոնադրությունը ևս այսպիսի կանոն ունի, այն տարբերությամբ, որ տուգանք է սահմանվում հուղարկավորությանը չմասնակցողների համար[29]։ Գեռլայի կտրիճների 1728 թ. կանոնադրության մեջ կրկնվում է նույնը։ Հիշատակ-

---

24 Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280), «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 373—374։

25 Նույն տեղում, էջ 374։

26 Գ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 88։

27 Նույն տեղում, էջ 71, 59։

28 Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280), էջ 374—375։

29 «Արարատ», 1889, հունիս, էջ 390։

վում է նաև «...ու պատարագի ալ պի տան» հանդամանքը[30]։ Համարյա նույնը կարելի է կարդալ նաև 1790 թ. հաստատված կանոնադրության մեջ[31]։ «Աւագ եղբայրն քաղցրութեամբ խրատեսցէ և կրսերն հնազանդութեամբ լուիցէ»,—կարդում ենք Երզնկայի կանոնադրության մեջ[32], նույնն է կրկնվում նաև Յազլովեցի կանոններում, բայց այլ բառերով. «փոքրաւոր կամ մլօտշրյ աղբերն» «նեէրոսլուշնրյ» չպետք է լինի «սթարշրյ կտրիճվորաց», հակառակ դեպքում նրան «քարաթ» կանեն «ըընտանով»—բանտով կամ «ճուրումով»—տուգանքով[33]։

Բնականաբար, պատմական տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում ստեղծված այդ կանոնադրությունները, որոնք նկատելի կերպով հարմարեցված են տեղական պայմաններին, միմյանց և Երզնկայի կանոնադրության հետ համեմատած ունեն առանձին տարբերություններ։ Օրինակ, Ռեոլայի եղբայրությունների կանոններով նախատեսվում էր տարեկան 6-ական ղլոտի տալ տիրացուին, որը «զաղքատ մարդիկաց տղաքը կու սորվեցու կարդալու»[34], իսկ Յազլովեցի ու Ռաշկովի կանոններում այդ մասին ոչինչ չկա։ Դրա պատճառը դժվար չէ կռահել. կաթոլիկացնող ուժերը Արևմտյան Ուկրաինայում նախ և առաջ աշխատեցին անջատել դպրոցները հայկական եղբայրություններից, դցելով նրանց իրենց անմիջական հսկողության տակ։

Երզնկայի կտրիճների նման Յազլովեցի հայ պատանիներն էլ սիրել են իրենց ժամանակը խնճույքներում կարճել, ուստի և նրանց կանոնադրության մեջ հանդամանորեն պարզաբանված է այդ հարցը։ Այնտեղ բազմաթիվ կանոններ կան քեֆերն ու հարսանիքները կազմակերպված և հաճելի ձևով անցկացնելու մասին։ Ուշադրավ է, որ կանոններից մեկում սահմանված է «խոսակցության ժամանակ իրար խոսք չկտրել» կամ քեֆի ժամանակ սեղանի շուրջ չնստել թրով կամ ատրճանակով[35]։ Այստեղից հետևություն. իրենց հեռավոր նախնիների՝ վանեցիների ու Երզնկացիների նման Յազլովեցի կտրիճների համար զինված լինելը սովորական բան էր, ուստի և կանոն է սահմանված այդ մասին։ Հայաստանի կտրիճները պատերազմների ժամանակ մասնակցում էին իրենց քաղաքների պաշտպանության գործին, կասկածից վեր է, որ թրով ու թվանքով ման եկող այս յազլովցիները և կամ կամենիցացի կտրիճներն էլ մասնակից են եղել պաշտպանական այն բազմաթիվ կռիվներին, որ այն ժամանակ Ուկրաինայի քաղաքացիները ստիպված էին մղել հատկապես թուրքական ու թաթարական հրոսակների դեմ։ Հայտնի է, որ լեհական Յան Սոբեսկի թագավորը հայ արհեստավորներին մի շարք արտոնություններ շնորհելու վերաբերյալ 1685 թ. հունիսի 6-ին տված իր հրովարտակի մեջ նշել է հայերի կտրիճությունն ու քաջագործությունը Կամենիցի, Յազլովեցի ու Լվովի, ինչպես և մյուս սահմանային բերդերի պաշտպանության գործում։

Արևմտյան Ուկրաինայում եղած հայկական «եղբայրություններն» ունեցել են դրամարկղներ, որոնց մեջ պահել են իրենց կարևոր փաստաթղթերն ու

---

30 Գ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 88—89։

31 «Արարատ», 1889, հունիս, էջ 398։

32 Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280), էջ 376։

33 Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 453։

34 Գ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 59, 71, 86։

35 Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 453։

դրամական միջոցները։ Եղբայրությունների ղեկավար անձանց ընտրությունները տեղի են ունեցել տարեկան մեկ անգամ։ Այդ ղեկավարներից բացի, որոնք տարբեր անուններով են կոչվել «մանկտավագ» (Կամենիցում), «սթարշրյ» (Յազլովեցում), «վատահ» (Բոտոշանիում, Յաշում և Ռոմանում), «սդարեսդա» (Ռաշկովում), «պրեֆեկտ» (Գեռլայի Սբ. Սրբորդության եղբայրությունում), «տիրեքդոր» (Գեռլայի Գր. Լուսավորչի եղբայրությունում), «ավագ քույր» (Գեռլայի Սբ. Աննայի աղջիկների եղբայրությունում), «պատանեկապետ» (Բոտոշանիում, Յաշում և Ռոմանում՝ 1790 թ. հետո), եղել են նաև տարբեր պարտականություններ ունեցող բազմաթիվ ընտրովի պաշտոնյաներ։

Մեզ հասած սկզբնաղբյուրներից երևում է, որ Սրզնկայի կտրիճները ժամանակի ընթացքում աստիճանաբար երկրորդական պլան են մղել եկեղեցին, կրոնական հարցերը, կերուխումի և զվարճությունների տալով իրենց։ Հովհաննես Երզնկացու մոտավորապես 1290 թ. գրած «Յոհաննու մեծի մականուն Պըլուզ. ասացեալ ի խնդրոյ Յակոբայ Մանկտաւադի Եզրնդացոյ» բանաստեղծության մեջ, որտեղ, ըստ բանասեր Ա. Սրապյանի, կարելի է գտնել «Սահման»-ում շարադրված համարյա բոլոր կանոնները[36], արժեքավոր տեղեկություններ կան Երզնկայի կտրիճների մանկտավագ Հակոբի մասին։ Պարզվում է, որ երևնամյա այդ երիտասարդը «աղօթից ծոյլ» է եղել, եկեղեցի չի հաճախել, պահք չի պահել, զրկել է «որբոց, այրեաց», «հիւանդաց տես» չի գնացել, «մերկոց հանդերձ» չի հագցրել, մի խոսքով խախտել է «Եղբայրության» կանոնադրությունը քեֆերի և խրախճանքների մեջ անցկացնելով իր ժամանակը[37]։ Ա. Սրապյանի ենթադրությամբ այդ նա է եղել, որ «...որպէս և հանապազորդ յազօթսն իւր ասէր» «...եթէ ինքն է Հայր, ինքն է Որդի և ինքն Հոգին Սուրբ», այլ կերպ ասած նա հարել է աղանդավորական ինչ-որ շարժման[38]։ Եթե մանկտավագը այսչափ հեռացել էր եկեղեցուց, պարզ է, որ նրա ղեկավարած «մանուկներն» էլ պետք է հետևեին նրան, և որոշ տեղեկություններ այդ մասին պահպանվել են։

Արդ, ինչպե՞ս է պատահել, որ մայր երկրում եկեղեցուց և կրոնական կյանքից բավականին հեռացած հայ կտրիճները հայրենիքից դուրս կրկին համախմբվել են եկեղեցիների շուրջը։ Երզնկայում, ինչպես սկզբում նշեցինք, «եղբայրության» մեջ միավորվելու նպատակն է եղել նաև պայքարը բռնակալության դեմ. կտրիճները օգնելու էին միմյանց՝ «եթէ որ յեղբարութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի և ի բռնաւորաց նեղիցի», այս պատճառով այդ «եղբայրությունը» որոշ առումով նաև զինվորական կազմակերպություն է հիշեցնում, կանոնադրության համաձայն այն բաժանված է տասնյակների, որոնց գլուխ են անցած տասնապետները, չորս տասնյակները կազմել են քառասնյակներ՝ իրենց գլխավորով[39]։ Բայց Ուկրաինայում հիմնական շեշտը դրվում է եկեղեցուն հովանավորություն ցույց տալու վրա։

---

36 Ա. Սրապյան, Պլուզ Հովհաննես Երզնկացու մի բանաստեղծության մասին, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1957, № 9, էջ 106։

37 Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի (ուսումնասիրություն և բնագրեր), Երևան, 1958, էջ 172։

38 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 28—29։

39 Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնագրությունը (1280), էջ 376։

Ի՞նչն է սրա պատճառը։ Կարծում ենք, որ հայկական «Կտրիճվորաց» կազմակերպությունների էության մեջ տեղի ունեցած այս փոփոխությունը կապված է շրջապատի պայմանների հետ։ Երբ արտադրության հետևանքով ազգային շատ ավանդությունների հետ միասին այդ կազմակերպությունները տարվեցին հեռավոր երկրներ, ապա տեղական պայմանների ազդեցության ներքո որոշ չափով փոխվեց և նրանց բնույթը, դասակարգային ներհակություններին միացավ նաև մի կարևոր խնդիր՝ ազգապահպանման գործը։ Հայտնի է, որ եկեղեցին կարևոր դեր էր խաղում այդ գործում, ուստի եթե հայ մարդիկ օտար վայրերում, ներկա դեպքում լեհական պետության իշխանության տակ եղած ուկրաինական քաղաքներում, կաթոլիկացման և լեհացման անընդհատ աճող սպառնալիքի պայմաններում շարունակում էին համախմբվել նրա շուրջը, օգնել և օժանդակություն ցույց տալ միմյանց, ապա դրանով իսկ նրանք պայքարում էին այն ուժերի դեմ, որոնք ամեն գնով աշխատում էին ապազգայնացնել նրանց։ Այս պայքարը փաստորեն վեր էր ածվել քաղաքական պայքարի։ Սակայն մարտնչող ուժերը խիստ անհավասար էին, մայր հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող լեհահայ համայնքի քայքայված մասը, որը չէր կարողացել հեռանալ Ռեչ-Պոսպոլիտայի սահմաններից, ստիպված էր ընդունել կաթոլիկություն, ուստի և «Կտրիճվորաց եղբայրությունները» ժամանակի ընթացքում սկսում են աստիճանաբար վերածվել զուտ կրոնական կազմակերպությունների։ Հայտնի է, որ նույնպիսի, բայց ավելի համառ ու կազմակերպված պայքար մղում էին և ուկրաինացիները։ Ուկրաինական «Եկեղեցական եղբայրությունները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնի կաթոլիկացման, ազգային ճնշման ու լեհացման դեմ ուղղված քաղաքական պայքարի կազմակերպություններ և երբ վերացավ լեհացման սպառնալիքը և Ուկրաինան միացվեց Ռուսական կայսրությանը, այդ պայքարը կորցրեց իր իմաստը, և «Եղբայրությունները», որոնք կատարել էին իրենց պատմական դերը, դարձան միայն հոգևոր հաստատություններ[40]։

Ինչպես տեսնում ենք, հետաքրքրական շատ հարցեր են կապված Արևմտյան Ուկրաինայի հայկական «Կտրիճվորաց» կազմակերպությունների հետ, բայց առայժմ բավարարվենք այսքանով՝ նշելով վերջում, որ թեպետ այդ եղբայրությունների կանոններում հատուկ կետ չկա, բայց նրանք կարծես շարունակել են ղեկավարվել մայր հայրենիքում դրի առնված հետևյալ կանոնով. «Եւ խաղաղասէրք լինիցին եղբարքս մեր ի մէջ աշխարհի. ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն պասել և ղլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցեն և յիմաստութենէն շահիցին առանց հակառակութեան»[41]։ Հիշատակված կանոնադրությունների մեջ չկա մի բառ, մի արտահայտություն, որը այս կամ այն չափով հակասության մեջ լինի ժողովուրդների միջև հաշտ ու խաղաղ հարաբերությունների կոչ անող Երզնկայի կանոնադրությունից քաղված այս տողերի հետ։ Կարծում ենք, որ Արևմտյան Ուկրաինայում դարեր ի վեր գոյություն ունեցած հայկական «Կտրիճվորաց եղբայրությունների» պատմության դիտական շարադրումը, ինչպես և սկզբնաղբյուրների, առաջին հերթին «Եղբայրությունների» պահպանված կանոնադրությունների ռուսերեն թարգմանությունները հնարավորություն կտան նաև մեր ուկրաինացի պատմա-

[40] Проф. Е. Н. Медынский, նշվ. աշխ., էջ 29։
[41] Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 376։

բաններին ուկրաինական «եղբայրությունների» մասին խոսելիս կանգ առնելու նաև հայկական «Կտրիճվորաց եղբայրությունների» գործունեության վրա։

О «БРАТСТВАХ УДАЛЬЦОВ» В АРМЯНСКИХ КОЛОНИЯХ ЗАПАДНОЙ УКРАИНЫ

В. Р. ГРИГОРЯН

(Резюме)

История существовавших в ряде армянских колоний Западной Украины, как и в городах самой Армении, «Братств удальцов» нуждается в серьезном и всестороннем изучении. Новооткрытый устав «Братства удальцов», написанный в 1280 г. известным армянским ученым и поэтом XIII в. Иоаннесом Ерзынкаци в г. Ерзынка (Западная Армения), показывает, что эти «Братства» имеют много общего с возникшими в период монгольского владычества в городах Малой Азии организациями «Ахи» («Братья»). Охватывая городскую трудящуюся молодежь, «Братства» преследовали цели совместной борьбы против поработителей на основе экономической помощи и взаимодействия.

В результате вынужденной эмиграции армян из Армении подобные «Братства» стали возникать и в армянских поселениях Западной Украины, сохраняя свои основные организационные и идеологические принципы. По свидетельству первоисточников, «Братства удальцов» существовали в армянских колониях городов Каменец-Подольский, Львов, Язловец, Рожков, Станислав, Тисменица и др.

Известные ныне уставы армянских «Братств удальцов» украинских городов Язловец (1646), Рожков (1751), а также румынских городов Ботошани, Яссы, Роман (1690) и других имеют много общего как друг с другом, так и с «Уставом и правилами» ерзынкайской организации (в доказательство этого в статье приводится несколько характерных примеров). Однако уставы на Украине и в румынских городах заметно приспособлены к местным условиям и имеют ряд отличительных черт с уставом ерзынкайского «Братства». Например, в отличие от ерзынкайских «удальцов», которые со временем отодвинули церковь и религиозные вопросы на второй план, армянские «удальцы» на Украине вновь сплотились вокруг церкви. Причина этого — постоянная опасность ассимиляции. Автор уделил особое внимание факту существования (в период не позднее 1522 и не раньше 1607 гг.) «Братства удальцов» в армянской колонии г. Каменец-Подольский и пришел к выводу, что эта организация была перенята в Каменце от армянской колонии Кафы (Феодосия).

Подробное исследование структуры и деятельности «Братств», существовавших в армянских колониях Западной Украины, даст возможность определить их взаимоотношения с украинскими «Церковными братствами» и позволит пролить свет на ряд малоизученных сторон городской жизни Украины, Польши, а также средневековой Армении.